

# ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դաստիարակ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաբուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաբուղը: Պատասխանների ձևաբուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

**1 Պոլիակ հիդրայի մարմնի ո՞ր բջիջներից են առաջանում նոր խայթող բջիջները.**

- 1) մաշկամկանային
- 2) գեղձային
- 3) խայթող
- 4) միջակա

**2 Ո՞ր հատկանիշը բնորոշ չէ ոսկրային ծկների մեծ մասին.**

- 1) խոիկները արտաքինից ծածկված են կափարիչներով
- 2) քորդան պահպանվում է ամբողջ կյանքի ընթացքում
- 3) մարմինը պատված է ոսկրային թեփուկներով
- 4) ունի լողափամփուշտ

**3 Ո՞ր տիպի կամ դասի ներկայացուցիչներին է բնորոշ ստոծանու առկայությունը.**

- 1) հողվածոտանիների
- 2) կաթնասունների
- 3) աղեխորշավորների
- 4) երկկենցաղների

**4 Ինչպիսի՞ կառուցվածք ունի սպիտակ պլանարիայի նյարդային համակարգը.**

- 1) վերկլանային և ենթակլանային հանգույցներ և մեջքի նյարդային շղթա
- 2) նյարդային հանգույց, նրանից դուրս եկող երկու նյարդային բներ՝ կազմված նյարդային բջիջներից և նյարդաթելերից
- 3) երկու հանգույցից բաղկացած շուրջկլանային նյարդային օղակ՝ կազմված աստղաձև բջիջներից, իսկ մարմնի տարբեր մասերում՝ չորս հանգույցից
- 4) շուրջկլանային նյարդային օղակ և փորի նյարդային շղթա

**5 Ո՞ր միջատներն են զարգանում լրիվ կերպարանափոխությամբ.**

- 1) խավարասերները
- 2) ծղրիդները
- 3) մորեխները
- 4) մրջյունները

**6 Ինչե՞ր չունի գորտը.**

- 1) կրծոսկը և պարանոցի ող
- 2) բազուկոսկը և ազդրոսկը
- 3) կողոսկը և կրծքավանդակ
- 4) իրանի ողեր և պոչոսկը

7

Ո՞ր բույսի տերևներն ունեն աղեղնաջիղ ջղավորություն.

- 1) եղիպտացորենի
- 2) եղան լեզվի
- 3) ցորենի
- 4) գարու

8

Ինչպե՞ս են փոխվում շնչառական շարժումները մարդու օրգանիզմում քրվածնի անբավարարության դեպքում.

- 1) իրականացվում են ընդհատումներով
- 2) հաճախանում են
- 3) դանդաղում են
- 4) խորանում են

9

Ո՞ր վիտամինների անբավարարությունն է հանգեցնում մարդու տեսողության վատքարացմանը.

- 1)  $B_1$  և  $B_2$
- 2)  $C$  և  $A$
- 3)  $C$  և  $B_2$
- 4)  $A$  և  $B_2$

10

Մարդու օրգանիզմում որտե՞ղ է սինթեզվում այրոքրոմֆին սպիտակուցը.

- 1) թրոմբոցիտներում
- 2) փայծաղում
- 3) լյարդում
- 4) արյան պլազմայում

11

Մարդու օրգանիզմում ո՞ր գոյացության միջոցով ախտածին մանրէները քրըմպանից կարող են ներթափանցել միջին ականջի խոռոչ.

- 1) լսողական արտաքին անցուղու
- 2) ձվաձև պատուհանի թաղանթի
- 3) եվստախյան փողի
- 4) թմբկաթաղանթի

12

Մարդու գլխուղեղի ո՞ր բաժիններում են գտնվում պարասիմպաթիկ կենտրոններ.

- 1) ուղեղաբնի բոլոր բաժիններում
- 2) երկարավուն և միջին ուղեղներում
- 3) կամրջում և միջանկյալ ուղեղում
- 4) միջանկյալ ուղեղում և ուղեղիկում

13

Որտե՞ղ է գտնվում մարդու սրտի եռափեղկ փականը.

- 1) ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում
- 2) աջ փորոքի և թոքային զարկերակի միջև
- 3) աջ նախասրտի և աջ փորոքի բացվածքի սահմանում
- 4) ձախ փորոքի և առտայի միջև

14

Ո՞ր հյուսվածքից են կազմված մարդու օրգանիզմում կապանները.

- 1) թելավոր շարակցական
- 2) հարթ մկանային
- 3) վորխը շարակցական
- 4) հարթ էպիթելային

15

Մարդու ո՞ր հիվանդությունն է պայմանավորված ներզատական գեղձի գերգործառույթով.

- 1) լորձայտուց
- 2) բրոնիցախս
- 3) կրետինիզմ
- 4) բազենովյան

16

Մարդու ո՞ր օրգաններն են հատկապես շատ ջերմություն առաջացնում.

- 1) մաշկը, կմախքային մկանները
- 2) կմախքային մկանները, լյարդը
- 3) թոքերը, երիկամները
- 4) լյարդը, թոքերը

17

Մարդու օրգանիզմում որտե՞ղ է քայլայվում կարրոհեմոգլոբինը.

- 1) խոշոր զարկերակներով հոսող արյան մեջ
- 2) արյան շրջանառության փոքր շրջանի երակներով հոսող արյան մեջ
- 3) արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներով հոսող արյան մեջ
- 4) արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներով հոսող արյան մեջ

18

Սպիտակուցի պոլիպեպտիդային շղթայի սինթեզի համար որպես անմիջական մատրիցա հանդես է գալիս.

- 1) ԴՆԹ-ի մոլեկուլը
- 2) ի-ՈՆԹ-ի մոլեկուլը
- 3) ո-ՈՆԹ-ի մոլեկուլը
- 4) փ-ՈՆԹ-ի մոլեկուլը

**19 Պլազմալեմի միջով նյութերի տեղափոխությունը ըստ գրադիենտի.**

- 1) կոչվում է ցիտոզ
- 2) կոչվում է ակտիվ տեղափոխություն
- 3) կոչվում է պասիվ տեղափոխություն
- 4) արտաքին էներգիայի ծախս է պահանջում

**20 Ո՞ր դեպքում է ճիշտ նշված ԴՆԹ-ի կազմում գտնվող նուկլեոտիդներից մեկի կազմությունը.**

- 1) թիմին - դեօքոքսիոնիտոզ - ֆուֆորական թբվի մնացորդ
- 2) ցիտոզին - ուրոզ - ֆուֆորական թբվի մնացորդ
- 3) ուրացիլ - դեօքոքսիոնիտոզ - ֆուֆորական թբվի մնացորդ
- 4) գուանին - ուրոզ - ֆուֆորական թբվի մնացորդ

**21 Կորիզակներն առաջանում են՝**

- 1) բջջային կենտրոնում
- 2) կորիզաթաղանթի ներքին թաղանթի վրա
- 3) քրոմոսոմների որոշակի հատվածներում
- 4) հարթ էնդոպլազմային ցանցի թաղանթների վրա

**22 Բջջային կառուցվածք չունեն.**

- 1) կապտականաչ ջրինուտները
- 2) բակտերիաները
- 3) բակտերիաֆագերը
- 4) խոլերայի հարուցիչները

**23 Ո՞ր գործընթացի ժամանակ ջուր չի առաջանում.**

- 1) ճարպերի լրիվ ճեղքման
- 2) կաթնաթթվային խմորման
- 3) սպիրտային խմորման
- 4) պիրոխաղողաթթվից կաթնաթթվի առաջացման

**24 Ինչպիսի՞ սկզբնական գենոտիպերի դեպքում է երկիրքի խաչաերումից հետո, ալելների երկրորդ գույզում առկա ոչ լրիվ դրմինանտության դեպքում ստացվում  $1:1:1:1$  ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի.**

- 1) AaBB և aaBb
- 2) AAbb և aaBb
- 3) AaBb և AaBb
- 4) AAbb և AaBB

**25 Ո՞ր մուտացիան է առավել հաճախ դրսևրվում խճանկարային եղանակով.**

- 1) մուտացիան զիգոտի սեռական քրոմոսոմներից մեկում
- 2) գենային մուտացիան գամետոգենեզի ժամանակ
- 3) գենային մուտացիան սեռական քրոմոսոմներում
- 4) սոմատիկ մուտացիան անհատական զարգացման վաղ փուլերում

**26 Քանի՞ ֆենոտիպային խումբ է առաջանում երկու հետերոզիգոտների միահիքքիդ խաչասերումից.**

- 1) մեկ՝ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 2) երկու՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 3) երեք՝ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում
- 4) երեք՝ լրիվ դոմինանտուրյան դեպքում

**27 Ո՞ր օրգաններն են առաջանում էնտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում.**

- 1) աղիների, խոիկների և թոքերի էպիթելիում
- 2) մկանները, նյարդերը, աղիները, երիկամները
- 3) զգայարանները, նյարդերը, թոքերը, մաշկի էպիթելիում
- 4) միզածորանները, միզուկը, զիխուղեղը, լսողության օրգանները

**28 Ինչո՞ւ է պայմանավորված բույսերի ցիտոպլազմային արական ամլությունը.**

- 1) սաղմնապարկում կենտրոնական բջջի բացակայությամբ
- 2) փոշեհատիկի միտոքոնդրիումների ԴՆԹ-ի մուտացիաներով
- 3) սաղմնապարկում ձվաբջջի բացակայությամբ
- 4) փոշեհատիկի երկու սպերմիումներից մեկի ոչնչացմամբ

**29 Նշվածներից ո՞րն է հատկանշական մոդիֆիկացիոն փոփոխականության համար.**

- 1) կրում են զանգվածային բնույթ և չեն փոխանցվում հաջորդ սերունդներին
- 2) կրում են անհատական բնույթ և փոխանցվում են հաջորդ սերունդներին
- 3) կրում են անհատական բնույթ և պայմանավորված են գեների փոփոխություններով
- 4) կրում են զանգվածային բնույթ և փոխանցվում են հաջորդ սերունդներին

**30 Ի՞նչ է ընկած անեռուպիդիայի հիմքում.**

- 1) քրոմոսոմների թվաքանակի պահպանումը
- 2) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ մեծացումը
- 3) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ փոքրացումը
- 4) քրոմոսոմների թվաքանակի ոչ բազմապատիկ անգամ փոփոխումը

**31** Նշվածներից ո՞րն է հոմոլոգ միջատների ներքին ծնոտներին.

- 1) փողի կնճիթը
- 2) բռչնի կտուցը
- 3) թիթեռի ծծող կնճիթը
- 4) օձերի բունավոր գեղձերը

**32** Ո՞ր նյութը կենսահանքային չէ.

- 1) հողը
- 2) նավթը
- 3) կրային ապարը
- 4) օվկիանոսի ջուրը

**33** Ազոտի շրջապտույտի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Ախտրիֆիկացնող բակտերիաները օքսիդացնում են ամոնիակը մինչև Ախտրիտներ և նիտրատներ
- 2) օրգանական մնացորդների քայլայման արդյունքում ամոնիֆիկացնող բակտերիաները մոլեկուլային ազոտը վերադարձնում են մթնոլորտ
- 3) ազոտի կենսաբանական կապմանը մասնակցում են և աերոբ, և անաերոբ բակտերիաները
- 4) բույսերը կարող են յուրացնել ազոտը նիտրատների ձևով

**34** Ի՞նչն է նպաստում ներտեսակային գոյության կովի մեղմացմանը.

- 1) սաղմնային զարգացումը
- 2) տեսակի պատմական զարգացումը
- 3) անուղղակի հետսաղմնային զարգացումը
- 4) ուղղակի հետսաղմնային զարգացումը

**35** Տեսակի ո՞ր չափանիշով են նման մալարիայի մոծակի կրկնորդ տեսակները.

- 1) կենսաքիմիական
- 2) գենետիկական
- 3) ձևաբանական
- 4) բոլոր չափանիշներով

- (36-37) Արյան III խմբով և հիպերտրիխոտզով (ականջի մազակալում) դալտոնիկ տղամարդն ամուսնացավ արյան II խմբով կնոջ հետ: Նրանց առաջին երեխան դալտոնիկ էր, ուներ արյան I խումբ և չուներ հիպերտրիխոզ:

36

Ի՞նչ գենոտիպ ունեին ծնողները, եթե հիպերտրիխոզ պայմանավորող C գենը գտնվում է Y-քրոմոսոմում:

- 1)  $I^0I^BX^dY^C$  և  $I^AI^AX^DX^D$
- 2)  $I^BI^BX^dY^C$  և  $I^0I^AX^DX^d$
- 3)  $I^BI^BX^DY^C$  և  $I^AI^AX^DX^D$
- 4)  $I^0I^BX^dY^C$  և  $I^0I^AX^DX^d$

37

Որոշել այդ ընտանիքում արյան IV խմբով և հիպերտրիխոտզով երեխա ծնվելու հավանականությունը:

- 1) 1/16
- 2) 1/8
- 3) 1/4
- 4) 1/2

38

Խաչասերել են  $AaBbCcDd \times AaBbCcDd$  գենոտիպերով առանձնյակներին: Ակելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին զույգում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոզ քրոմոսոմների տարրեր զույգերում: Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 54
- 3) 36
- 4) 81

39

Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 18 մոլ CO<sub>2</sub> և 140 մոլ H<sub>2</sub>O: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱՎՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա: Հաշվել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը.

- 1) 39,8%
- 2) 42,6%
- 3) 41,7%
- 4) 50,8%

40

ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 12960 նուկլեոտիդներից, իսկ Ա+Թ / Գ+Ց քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,4-ի: Գունել ցիտոզինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1890
- 2) 1350
- 3) 2700
- 4) 3780

41

Ինչպիսի՞ն է աճման գոտի անցած բջջի հետ կատարվող վերափոխումների հաջորդականությունը գամետոգենեզի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. n2c հավաքականով բջիջների առաջացում
2. ԴՆԹ-ի քանակի կրկնապատկում
3. նուկլեոտիդների միջև կովալենտ կապերի խզում
4. սպերմատիդների առաջացում
5. քրոմոսոմների տարամիտում
6. քրոմատիդների տարամիտում
7. հնմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա

42

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում ցուրտ պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ջերմակարգավորման կենտրոնի դրդում
2. մաշկի սառնության ընկալիչների դրդում
3. արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազում
4. ջերմատվության թուլացում
5. մաշկ մղվող արյան ծավալի նվազում
6. մաշկի արյունատար անոթների նեղացում

43

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. իգական հոմոգամետություն ունեն թիթեռները, բռչունները, սողունները
2. հետերոզիգոտ առանձնյակների միահիբրիդային խաչասերման արդյունքում լրիվ դոմինանտության դեպքում սերնդում ստացվում է  $1:2:1$  ճեղքավորում՝ և ըստ գենոտիպի, և ըստ ֆենոտիպի
3. երկինտերոզիգոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, զույգ ալելների ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում ստացվում են 9-ական գենոտիպային և ֆենոտիպային խմբեր
4. ըստ գամետների մաքրության վարկածի՝ գամետների առաջացման ժամանակ յուրաքանչյուր գամետի մեջ ընկնում են տվյալ հատկանիշը պայմանավորող զույգ գենները
5. դոմինանտ ֆենոտիպ ունեցող առանձնյակի գենոտիպը կարելի է որոշել ոեցեսիվ ֆենոտիպ ունեցող առանձնյակի հետ խաչասերման միջոցով
6. ալելալին գենները գտնվում են նույն քրոմոսոմներում

44

Կմախքի ո՞ր ուսկորների միացումները (նշված է ձախ սյունակում) միացման ո՞ր տեսակին են (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Ուսկորներ

Միացման տեսակ

- A. կող և կրծոսկը  
B. վերին ազատ վերջույթների  
C. կող և ող  
D. ողեր  
E. ստորին ազատ վերջույթների  
F. զանգի ուղեղային բաժնի  
G. ստորին վերջույթների գոտու

1. կիսաշարժուն  
2. շարժուն  
3. անշարժ

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. հատիկավոր էնդոպլազմային ցանցում ռիբոսոմները գտնվում են այդ կառուցվածքի թաղանթների վրա, իսկ հարթ էնդոպլազմային ցանցում՝ խուղակներում և խոռոչներում
2. օստարածին նյութերի օքսիդացումը և դուրսբերումը հատիկավոր էնդոպլազմային ցանցի ֆունկցիաներից է
3. էնդոպլազմային ցանցն առավել լավ է օպրգացած կորիզավոր օրգանիզմների բջիջներում, իսկ նախակորիզավորների բջիջներում այն ընդհանրապես բացակայում է
4. սարկոպլազմային ցանցը հարթ էնդոպլազմային ցանցի ձևափոխությունն է մկանային բջիջներում
5. հատիկավոր էնդոպլազմային ցանցի ռիբոսոմներում համեմատությամբ՝ միտոքոնդրիումներում և պլաստիդներում պարունակվող ռիբոսոմներն ավելի խոշոր են
6. պլազմալեմի համեմատությամբ՝ էնդոպլազմային ցանցն ավելի բարակ է

## Բ մակարդակ

46

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի փուլերի հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը:

1. Հ-ի իոնների միացում էլեկտրոնի հետ
2. մոլեկուլային բրվածնի առաջացում
3. ջրի ֆոտոլիզ (քայլայում)
4. գլյուկոզի առաջացում
5. քլորոֆիլի իոնացում
6. ատոմային ջրածնի առաջացում

47

Ինչպիսի՞ն է մարդու մատների շոշափական ընկալիչներից մինչև մեծ կիսագնդերի մաշկամկանային զգայության գոտի նյարդային ազդակի հաղորդմանը նյարդային համակարգի բաժինների մասնակցության հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը:

1. ընկալիչ
2. մեծ կիսագնդերի կեղևի գագաթային բիլթ
3. զգայական նեյրոնի աքտոն
4. ողնուղեղային հանգույց
5. զգայական նեյրոնի դենդրիտ
6. ներդիր նեյրոնի մարմին
7. ուղեղաբուն
8. ողնուղեղի հետին եղջյուր
9. ողնուղեղի վերընթաց ուղի

48

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունն անցնում արյունատար համակարգի բաժիններ՝ սկսած սրտից արտամղման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ձախ փորոք
2. զարկերակներ
3. աջ նախասիրս
4. մազանոքներ
5. առրտա
6. երակներ

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու շնչառության ժամանակ՝ սկսած հյուսվածքներում նյութափոխանակությունից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. շնչառական կենտրոնի դրդում
2. թոքերի ծավալի մեծացում
3. թոքերում օդի ճնշման բարձրացում
4. արյան մեջ ածխաբթու գազի խտության մեծացում
5. թոքերում օդի ճնշման անկում
6. գազափոխանակություն թոքաբշտերի օդի և մազանոքներով հոսող արյան միջև
7. միջկողային մկանների բուլացում
8. ստոծանու մկանների կծկում
9. օդի ներթափանցում թոքեր

50

Ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի փոխհարաբերությունների ձևերի բնութագրերի (նշված է ձախ սյունակում) և սիմբիոզի տարրեր տեսակների (նշված է աջ սյունակում) միջև։ Նշել ճիշտ համապատասխանությունը։

Բնութագիր

Սիմբիոզի տեսակ

- A. փոխազդող տեսակներից մեկը բնակվում է բույսերի վեգետատիվ օրգաններում՝ առաջ բերելով տարրեր հիվանդություններ
- B. էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառաբույսերը որպես հենարան
- C. փոխազդող տեսակներից միայն մեկն է ստանում օգուտ, իսկ մյուսը այդ փոխազդեցության հանդեպ անտարրեր է
- D. փոխազդող տեսակներից մեկը օգտագործում է մյուս տեսակի օրգանիզմը, որպես գոյության միջավայր և սննդի աղբյուր
- E. լոցման ձևերը ստանում են սննդի մնացորդներ այն կենդանիներից, որոնց ուղեկցում են և միաժամանակ պաշտպանվում գիշատիչներից
- F. փոխազդող տեսակները ստանում են օգուտ, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ

51

Ո՞ր նյարդային կենտրոնը (նշված է ձախ սյունակում) մարդու կենտրոնական նյարդային համակարգի ո՞ր տեղամասում է (նշված է աջ սյունակում) գտնվում։ Նշել համապատասխանություններն ըստ հերթականության։

Նյարդային կենտրոն

Կենտրոնական նյարդային համակարգի տեղամաս

- A. հոտառական գրտի
- B. կմախքային մկաններին ազդակներ ուղարկող գրտի
- C. լույսի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսի կենտրոն
- D. քաղցի և ծարավի զգացողության կենտրոն
- E. ձայնի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսի կենտրոն
- F. հոգեկան գործունեությունը կարգավորող կենտրոն
- G. տեսողական ճանաչողության գրտի
- 1. մեծ կիսագնդերի կեղևի քունքային բիլք
- 2. ենթատեսաթումբ
- 3. մեծ կիսագնդերի կեղևի ծոծրակային բիլք
- 4. մեծ կիսագնդերի կեղևի ճակատային բիլք
- 5. միջին ուղեղ

52

Ի՞նչ համապատասխանություն կա օրգանիզմի (տրված է ձախ սյունակում) և նրա անսեռ բազմացման եղանակի (տրված է աջ սյունակում) միջև: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանիզմ

Օրգանիզմի անսեռ բազմացման եղանակ

- A. բակտերիաներ
- B. տափակ որդերի որոշ տեսակներ
- C. ծովաստղեր
- D. մալարիայի պլազմոֆում
- E. որոշ սնկեր
- F. խաղող, տիւլենի
- G. շուշան, վարդակակաչ

- 1. հատվածավորում
- 2. զոսապորներ
- 3. բջջի պարզ կիսում
- 4. անդախու
- 5. շիզոգոնիա
- 6. սոխուկ

53

Բջջային ցիկլի ո՞ր փուլում (նշված է աջ սյունակում) ո՞ր գործընթացն է տեղի ունենում (նշված է ձախ սյունակում): Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործընթաց

Բջջային ցիկլի փուլ

- A. ԴՆԹ-ի կրկնապատկում
- B. քրոմոսոմների ապապարուրում
- C. քրոմատիզների տարամիտում դեպի բջջի բևեռներ
- D. ցենտրիուլների տարամիտում դեպի բջջի բևեռներ
- E. բաժանման իլիկի վերջնական ձևավորում
- F. ցենտրիուլների կրկնապատկում

- 1. S-փուլ
- 2. անաֆազ
- 3. G<sub>2</sub>-փուլ
- 4. մետաֆազ
- 5. քելոֆազ
- 6. արոֆազ

54

Սաղմի զարգացմանը վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- 1. սողունների սաղմնային զարգացման գաստրոլազման փուլում սաղմնային սկավառակը կարծես ճեղքավորվում է երկու թերթիկի
- 2. տրոհման ընթացքում բլաստոմներում ԴՆԹ և Ո-ՆԹ չի սինթեզվում
- 3. կենդանիների ձվարջում տարբերում են երկու հակառակ բևեռներ՝ անիմալ և վեգետատիվ
- 4. ի տարբերություն նշտարիկի՝ գորտի սաղմի տրոհումն ավարտվում է գաստրոլի առաջացմամբ
- 5. շատ ձվարջիններում դեղնուցի քանակը վեգետատիվ բևեռից դեպի անիմալ բևեռ շատանում է
- 6. առաջնային օրգանոգեննեզի ընթացքում տեղի է ունենում բլաստոմներների ձևաբանական և կենսաքիմիական տարբերակում
- 7. գորտի սաղմնային զարգացման գաստրոլազման փուլում բլաստոմներները անիմալ բևեռից սողում են դեպի վեգետատիվ բևեռ

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ալրինիզմը պայմանավորող գենը տեղակայված է X քրոմոսոմում
2. սոմատիկ մուտացիաները սեռական բազմացման ճանապարհով չեն փոխանցվում հաջորդ սերունդներին
3. Շերևակուու և Թերների սինդրոմը գենումային մուտացիայի օրինակ է
4. Մարֆանի սինդրոմը ժառանգվում է առոտոսմային ռեցեսիվ գենով
5. հատկանիշի մոդիֆիկացիոն փոփոխականության սահմանները կոչվում են նրա ռեակցիայի նորմա
6. Էլվարդսի սինդրոմն անեռությունիցիայի հետևանք է

## Ի՞նչ գործառույթներ են կարգավորում մարդու զիսութեղի բաժինները: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Երկարավուն ուղեղի կորիզները կարգավորում են շնչառական և սիրտ-անորթային համակարգերի գործունեությունը, ճայնի նկատմամբ կողմնորոշման ռեֆլեքսները
2. ուղեղիկը կարգավորում է շարժումների համաձայնեցումը
3. կամուրջի կորիզները կարգավորում են դեմքի մկանների աշխատանքը, գեղձերի հյութազատությունը
4. միջին ուղեղում են գտնվում քնի, քաղցի, ծարավի զգացողությունների կենտրոնները
5. Երկարավուն ուղեղը կարգավորում է շնչառական համակարգի գործունեությունը, արցունքազատման իրականացումը
6. կամուրջի կորիզները կարգավորում են ակնագնդերի շարժումները, կոպերի բարբումը, մկանային լարվածությունը
7. միջանկյալ ուղեղում են գտնվում բոլոր զգայարանների ենթակեղևային կենտրոնները

## Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու տեսողական զգայարանի վերաբերյալ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. թարթիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորությունը
2. ակնագունդն արտաքինից ծածկված է սպիտակուցաթաղանթով
3. սրվակները չունեն գույնն ընկալելու հատկություն և հավասարաչափ են բաշխված ցանցաթաղանթում
4. սպիտակուցաթաղանթն աչքի առջևի մասում վերածվում է լուսաթափանցիկ եղերաթաղանթի
5. բբի դիմաց ցուպիկների կուտակման տեղը կոչվում է դեղին բիծ
6. եղերաթաղանթի կենտրոնում գտնվող բիբը ռեֆլեքսորեն լայնանում և նեղանում է
7. բբի հետևում գտնվում է ակնաբյուրեղը

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. սողունների սիրտը երկխորշ է, ունեն արյան շրջանառության երկու շրջան
2. սողունների մեզը մածուցիկ է, նման է սպիտակ շիլայի, պարունակում է միզարքու
3. սողունների մարմնի ջերմաստիճանն անկայուն է և կախված է արտաքին միջավայրի ջերմաստիճանից
4. սողունների կլանին հաջորդում է պարկանման ստամոքսը
5. սողունների ողնաշարը կազմված է չորս բաժիններից
6. սողունների կրծքային և գոտկային բաժնի ողերը կրում են կողեր

59

### Նշել բոլոր սխալ պնդումները.

1. պատիճի կծիկից արյունը հեռանում է արտատար երակով
2. երկրորդային մեզը ձևավորվում է ոլորուն խողովակներում
3. վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ քաժնի գրգռումը հարուցում է միզապարկի պատի մկանների բուլացում
4. մարդու երիկամային մարմնիկի երկու շերտերի միջև գտնվում է ոլորուն խողովակը
5. մարդու երիկամներում կա ընդամենը 1մլն նեֆրոններ
6. նեֆրոնի պատիճում առերրոդ զարկերակից առաջանում են մազանոթներ, որոնք միանալով առաջացնում են արտատար զարկերակ
7. միզարձակումը կարգավորվում է ողնուղեղի սրբանային հատվածում և գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում գտնվող կենտրոններով

(60-61) Քակտերիայի զանգվածը  $3,1229 \cdot 10^{-12}$  գ է: Սպիտակուցները կազմում են քջի զանգվածի 20%-ը:

60

Քանի՞ միլիոն սպիտակուցի մոլեկուլներ կան քակտերիայում, եթե դրանց միջին մոլեկուլային զանգվածը 22000 դալտոն է: Հաշվի առնել, որ 1 դալտոնը  $1,67 \cdot 10^{-24}$  գ է:

61

Քանի՞ անգամ է քակտերիայի սպիտակուցը կորավորող գենի զանգվածը գերազանցում սպիտակուցի զանգվածը: Ընդունել, որ մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը 350 դալտոն է, իսկ մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը՝ 100 դալտոն:

62

Ֆուռսինթեզի պրոցեսում բազմամյա մեկ ծառը հունիս ամսվա ընթացքում (15-ժամյա լուսային օր) արտադրել է 9408 լ թթվածին: 1 մոլ զազր զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը:

- (63-64) Մարդը  $38,4 \text{ m}^2$  ծավալով աշխատասենյակում գտնվել է 9 ժամ: Այդ ընթացքում կատարել է ֆիզիկական աշխատանք 5 ժամ: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումների հաճախականությունն աճել է 1,5 անգամ, շնչառական ծավալը՝ 1,6 և օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալը՝ 25%-ով: Ընդունել, որ սենյակը մեկուսացված է, հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում:

63

Քանի՞ լիտր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում 9 ժամվա ընթացքում:

64

Սենյակի օդի քանի՞ սոոկոսն է ներշնչել մարդը 9 ժամվա ընթացքում:

- (65-66) Աշխատանքի ընթացքում գլխուղեղը ստացել է 1008 լ արյուն: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ սրտի կծկումների հաճախականությունն աճել է 1,6 անգամ, մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված ծավալը՝ 2: Ընդունել, որ գլխուղեղը ստանում է արյան շրջանառության մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը, հարաբերական հանգստի վիճակում սրտի բոլորաշրջանի տևողությունը 0,8 վրկ. է, և մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 70 մլ արյուն:

65

Քանի՞ ժամ է տևել մարդու աշխատանքը:

66

Քանի՞ լիտր արյուն է արտամղվել սրտից մեկ օրվա ընթացքում:

- (67-68) Տարբերում են մարդու կարճատեսության մի քանի ձևեր: Կարճատեսության երկու ձևերը (I -ին II-րդ) ժառանգվում են որպես առոտոսոմային դոմինանտ հատկանիշ և իրար շղթայակցված չեն: Ընտանիքում, որտեղ ամուսինը կարճատես էր, իսկ կինն ուներ նորմալ տեսողություն, ծնվեցին երկու երեխաներ, որոնք տառապում էին տարբեր ձևի կարճատեսությամբ: Հայտնի է, որ կարճատես էր ամուսնու մայրը և եթե առկա են կարճատեսության երկու գենն էլ, ապա դրսւորվում է II-րդ ձևի կարճատեսությունը:

67

Որոշել այդ ընտանիքում նորմալ տեսողությամբ երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

68

Որոշել այդ ընտանիքում II-րդ ձևի կարճատեսությամբ երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

69

Օրգանիզմում իրականացված գլյուկոզի ճեղքման արդյունքում անջատված ջերմային էներգիայի 22%-ը հեռացվել է մաշկի մակերևույթից քրտինքի գոլորշիացման միջոցով: Գոլորշիացվել է 1,1 կգ քրտինք: Քանի՞ կԶ է կազմել էներգիայի կորուստը գլյուկոզի ճեղքման անթթվածին փուլում, եթե քրվածնային փուլում անջատվել է 252 մլ H<sub>2</sub>O: Հայտնի է, որ 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա: Ընդունել, որ 1 մլ գլյուկոզից մինչև կարճաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կԶ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կԶ էներգիա:

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատճախաններից մեկը.**

1. մարսողական համակարգի գործառույթը կարգավորվում է միայն նյարդային եղանակով
2. մարսողական գեղձերի գործառույթը խթանվում է պարասիմպաթիկ նյարդային համակարգի գոգիոններով
3. թքարտադրության պայմանական ռեֆլեքսի ռեֆլեքսային աղեղն անցնում է մեծ կիսագնդերի կեղևով
4. թքարտադրության կարգավորումն իրականացվում է ոչ պայմանական և պայմանական ռեֆլեքսների միջոցով
5. թքարտադրության ոչ պայմանական ռեֆլեքսի իրականացումը վերահսկվում է տեսաթմբում գտնվող կենտրոնով
6. թքագեղձերին նյարդային գոգիոնները թքարտադրության կենտրոնից հաղորդվում են մարմնական նյարդային համակարգի նյարդաթելերով